Տեղական միջավայրից դարևոր տնտեսական փորձի, սովորությունների, բարոյական հասկացողությունների, աշխարհաբմբռնման, ճաշակի փոխադրվելուն կանանց միջոցով թրքական միջավայրը ոչ թե արգելք, այլ ընդհակառակը նպաստավոր հանգամանք հանդիսացավ հեթանոսությունից մահմեդական կրոնի հաստատվելուն թաթարների մեջ։ Այդ միաստվածական ուսմունքը ավելի էր դյուրացնում թաթարների համար նույնպես միաստվածական բարոյախոսության հիման վրա ձևավորված կենցաղի փոխառումը տեղական քրիստոնյա միջավայրից, քան թե իրենց հետ Ասիայի ներքին երկրներից բերած հեթանոսությունը։ Բայց անվիճելի է, որ մահմեդական կրոնը իր մի քանի պահանջներով մի քանի դեպքերում որոշ և նեղ սահմանների մեջ դրավ այդ փոխառումը։ Այդպիսի պահանջներից են քրիստոնյաների պատրաստած կերակուրն ուտելու, խոզի միս գործածելու, գինի խմելու, կանանց երեսաց շրջելու և տղամարդկանց աչքին երևալու և այլ արգելքները։ Սակայն կյանքը հետզհետե սովորեցրեց այդ արգելքների վրայից անցնելու ձևերը։ Կարևոր էր այն հանգամանքը, որ նոր կրոնը խրախուսում էր հողագործական աշխատանքը, մանավանդ նրա ուսմունքը, որին հետևում էին Չանգեզուրի գրեթե բոլոր թուրքերը։ Դրանով ուժեղանում էին քոչվորությունից նստակյաց կյանքին անցնելու դրդապատճառները, և արագանում էր տեղացի նստակյաց ժողովուրդներից երկրագործական գործիքների ձևերի ու դաշտամշակության եղանակների յուրացումը։

Մեր այս աշխատության համապատասխան մասերում պիտի օգտվենք ամեն պատեհ առիթից ցույց տալու թե որպես հայկական կենցաղի այս կամ այն առանձնահատկությունը ձևափոխվել է թուրքական միջավայրի մեջ։ Այստեղ կանգ կառնեմ մի քանի բնորոշ երևույթների վրա, որոնք վկայում են, թե ինչ արմատական հեղաշրջումներ են կատարվել XIII դ. հետո այն թաթարական նիստ ու կացի մեջ, որը Կիրակոս Գանձակեցուն այնչափ տարօրինակ էր թվացել, որ նա կարևոր է համարել նրա նկարագրությանը նվիրել առանձին գլուխ։ «Վասն զի յօժարեցաք մեք յիշատակ թողուլ յազգս՝ որ գալոց են»[24]։ Հատվածը վերնագրված է՝ «Վասն ցուցման կերպարանաց Թաթարին բացահայտնութիւն սակաւուք»։ Այստեղ թաթարները ներկայացված են որպես մի ժողովուրդ, որը «յորժամ անկանէր յաճախ ուտէին և ըմպէին անյագ, յորժամ ո՛չ անկանէր, ժուժկալք էին»։ XIII դ. սնունդի ընդունելության այս անկանոնությունից և վաղվա մասին չմտածելուց ոչինչ չէր մնացել. «...ուտէին զամենայն կենդանիս՝ զսուրբս և զանսուրբս, և զմիս ձիոյ առավել մեծարէին, անդամ անդամ յօշեալ և եփեալ, կամ խորովեալ առանց աղի, և ապա մանր կտրեալ և թացեալ յաղաջուր, այնպէս ուտէին...»։ Նոր միջավայրում թաթարները սովորեցին բազմազան կերակուրներով սնվել, մանավանդ բուսեղենի և կաթնեղենի առատ գործածությամբ և առանց աղի վրա դողալու։ Խմում էին ղմուզ՝[25] ձիու կաթը թթվեցրած։ Սա բնորոշ էր, ինչպես և ձիու միս ուտելը, ձիաբույծ կենտրոնական ասիացու համար։ Մեկ դար առաջ, ինչպես և այժմ մեր հարևան թուրքերի մեջ ձիու միս գործածելը սակավ էր պատա-

---

[24] Անդ., գլ. 32, էջ 159, 160։

[25] Кумыс.